ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1
Սուբսիդիա տրամադրելու մասին

ք. Աշտարակ 20 «փետրվար» 2025թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը, ի դեմս Գլխավոր քարտուղար Հ.Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և ՀՀ Արագածոտնի մարզի <**Աշտարակի մարզադպրոց**> ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Ա. Առաքելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել հանրակրթական ուսուցման շրջաններում արտադպրոցական կրթության ուսուցման պարտավորությունը տարեկան 290 սանի համար այսուհետև՝ Ծառայություններ համաձայն կրթական չափորոշիչների.

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Պատվիրատուն իրավունք ունի.*

2.1.1.Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը.

2.1.2.Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ.

2.1.3.Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3. *Պատվիրատուն պարտավոր է.*

2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. *Կատարողը պարտավոր է.*

2.4.1. Սովորողների ուսուցումն իրականացնել կրթության պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1.Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ պետբյուջեից պետական աջակցության չափը կազմում է.

1. Արտադպրոցական ծրագրով 25 006 800 (քսանհինգ միլիոն վեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ,

3.2.Պատվիրատուն 3.1 կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝ ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի /այսուհետ Հավելված/, ոչ ուշ քան մինչև տվյալ ամսվա 10-ը: Պատվիրատուն վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունն ընդունումը կատարվում է համաձայն

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 2 էջից, անբաժանելի մաս կազմող հավելվածից /1 էջ/, և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4	ՀՀ Արագածոտնի մարզի ,Աշտարակի մարզադպրոց> ՊՈԱԿ Հասցեն՝ ք.Աշտարակ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**Կենտրոնական Գանձապետարան**
ՀՀ 900441034023	Հ/Հ 900448000373
ՀՎՀՀ 05031479	ՀՎՀՀ 05006002
գլխավոր քարտուղար ---------- Հ. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ	Դպրոցի տնօրեն՝ Ա.Առաքելյան---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N1

« 20 » 02 2025թ. կնքված պայմանագրի

« Աշտարակի մարզադպրոց

_____» ՊՈԱԿ-ին 2025թ տրամադրվելիք

գումարներն ըստ ամսեկան բացվածքի

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)
1	Հունվար	
2	Փետրվար	5001.3
3	Մարտ	5001.3
4	Ապրիլ	11253.0
5	Մայիս	11253.0
6	Հունիս	11253.0
7	Հուլիս	17504.2
8	Օգոստոս	17504.2
9	Սեպտեմբեր	17504.2
10	Հոկտեմբեր	25006.8
11	Նոյեմբեր	25006.8
12	Դեկտեմբեր	25006.8

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ

Ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան4

ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

ՀՀ 900441034023

ՀՎՀՀ 05031479

գլխավոր քարտուղար

_____ Հ.Գևորգյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ Արագածոտնի մարզի ,Աշտարակի մարզադպրոց> ՊՈԱԿ

Հասցեն՝ ք.Աշտարակ

Կենտրոնական Գանձապետարան

Հ/Հ 900448000373

ՀՎՀՀ 05006002

Դպրոցի տնօրեն՝

Ա.Առաքելյան_____

(ստորագրություն)

Կ.Տ

Կատարող

<Աշտարակի մարզադպրոց >
ՊՈԱԿ

_____

հասցե ք.Աշտարակ

_____

հ/հ __ 900448000373

հվհհ ___05006002

Պատվիրատու

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ

հասցե ք.Աշտարակ Վ.Պետրոսյան 4,
Կենտրոնական գանձապետարան

հ/հ 900441034023--

հվհհ __05031479___

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N120

ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ

՝----25-- ՝դեկտեմբեր՝2024թ.

Պայմանագրի անվանումը՝ 120

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝՝ ՝փետրվար 2024թ.

Պայմանագրի համարը՝ --------120----------

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյանի և Կատարողը՝ ի դեմս -----<Աշտարակի մարզադպրոց >-- ՊՈԱԿ-ի -- տնօրեն՝ - Ա.Հովակիմյանի---, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ՝__25 ՝՝ ՝___դեկտեմբեր ՝ 2024թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_120_ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 01.01.2024թ.-ից 25.12.2024թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ. դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Արտադպրոցական դաստիարակություն		01.01.2024թ. 25.12.2024թ.	25006.8	01.01.2024թ. 25.12.2024թ.
Ընդամենը			25006.8	

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Աշխատանքը հանձնեց

(ստորագրություն)
<ՊՈԱԿ –ի տնօրեն՝ - Ա.Հովակիմյան

Աշխատանքն ընդունեց

(ստորագրություն)

Ազգանուն՝ Ն. Գալստյան